տասներորդի գերանի վերայ գրուած է. «Աստ. ողորմեա ստացողի սորա եւ մեզ», ներքևի գերանի վերայ. «Տր. Աստ. ողորմեայ Իգնատիոսի։ ամէն»։ Կողովի մէջ կարմիր գնդակներ (խնձո՞ր, նուռ)։ Սորանի տարածութիւնը ցողունների հիւսուած է մէջտեղում տերև, իսկ շրջանակը կանաչ և կարմիր գոյներով մէջը զարդարուն եռանկիւնների շարք է. ճակատի կեդրոնում մէկը հիւսուածքի զարդ, իսկ տասներորդինը հնգատերև, տերևների միացման տեղում կարմիր գնդակով։

Կանոնների զարդագրութիւնը վերջաւորուում է գեղեցիկ ձևակերպուած մի խաչով, եռամասնեայ կամարի վերայ կազմուած խորանով, որ հաստատուած է երկու սիւների վերայ (պատկ. 15)։ Այս եւ միւս սիւները, ինչպէս և եռամասնեայ կամարը, երևան են գալիս մեր ճարտարապետութեան և մանրանկարչութեան մէջ ԺԱ. դարից սկսած. մեր խորանների օրինակն էլ իւր ամբողջական ձեւակերպութեամբ այդ դարի հետ պիտի կապուած լինի, թէև մի քանի մոտիւներ՝ կողմերն ու ոճաւորած թռչունները աւելի վաղ՝ ասորական և սասանեան աւանդներ են մատնանշում։ Խաչը հաստատուած քառանկիւնի պատուանդանի վերայ, որ զարդարուած է բուսական օրնամենտով. երկու կողմից գեղեցիկ աշտանակների վերայ հաստատուած վառուող, զարդարուն մոմերով։ Ներքևի տախտակի վերայ եղած յիշատակութիւնը նկարչի անուան՝ տեսանք վերև։